

**ՊՈԶՍՏ ԱՂՎԵՍԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
քարքառ (խոսվածք)**

Պառաւլը կուլը կթըւմ ա, տանըւմ ա կաթը դռան տակին վեր դնըւմ: Աղվեսը թաքուն-թաքուն գալիս ա խմըւմ:

Պառաւլը մրթմրթըւմ ա, ասըւմ ա.— Ի՛, վայ տամ քու գլխին, մթամ ես ապրուստ շատ ունիւմ, դուն էլ էկար մի ցլանգ կաթս խմեցիր (եղատարը հլբաթ մի կով ա ունենըւմ):

Տե մի քանի հետ աղվեսը գալիս ա թաքուն խմըւմ. պառաւլի իլլաջը որ կտրըւմ ա, փասարը պիըւմ ա: Մն էլ գալիս ա թե չէ, փետով տալիս պոչը կտրըւմ: Աղվեսը լաց-ղիամաթ ա անըւմ թէ.— Պուլըս տուր, կցեմ, կցմցեմ, գնամ հնգորտանցս եղնա հասնիւմ:

Պառաւլն ասըւմ ա.— Գնա կաթս բի՛:

Գնըւմ ա կովին ասըւմ ա.— Կովի՛կ, կովի՛կ, կաթիկ տուր, կաթիկ տանիւմ պառվին տամ, պառաւլն ինձի պոչիկ տա, պոչս կցեմ, կցմցեմ, գնամ հնգորտանցս եղնու հասնիւմ:

Կովն ասըւմ ա.— Գնա ինձ հմա խոտ բի՛:

Գնըւմ ա գեղինն ասըւմ.— Գեղին, գեղին, խոտիկ տուր, խոտիկ տանիւմ կովիկ տամ, կովիկն ինձի կաթիկ տա, կաթիկ տանիւմ պառվիկ տամ, պառվիկն ինձի պոչիկ տա, պոչս կցեմ, կցմցեմ գնամ հնգորտանցս եղնա հասնիւմ:

Գեղինն ասըւմ ա.— Գնա ինձ հմա անձրն բի՛:

Գնըւմ ա աստծու կուշտն, ասըւմ ա.— Աստո՛ծ, աստո՛ծ, անձրն տուր, անձրն տանիւմ գեղինն տամ, գեղինն ինձի խոտիկ տա, խոտիկ տանիւմ կովիկ տամ, կովիկ ինձի կաթիկ տա, կաթիկ տանիւմ պառվիկ տամ, պառաւլն ինձի պոչիկ տա, կցեմ, կցմցեմ, գնամ հնգորտանցս եղնա հասնիւմ:

Աստծոն էլ ասըւմ ա.— Գնա ինձ հմա գառը բի մատաղ արա:

Գնըւմ ա չոբանի կուշտը, ասըւմ ա.— Չոբա՛ն, չոբա՛ն, ինձ գառ տու, գառիկ տանիւմ աստոծ տամ, աստոծն ինձի անձրն տա, անձրն տանիւմ գեղինն տամ, գեղինն ինձի խոտիկ տա, խոտիկ տանիւմ կովիկ տամ, կովիկն ինձի կաթիկ տա, կաթը տանեմ պառվիկ տամ, պառաւլն ինձի պոչիկ տա, պոչս կցեմ, կցմցեմ, գնամ հնգորտանցս եղնա հասնիւմ:

Չոբանն էլ ասըւմ ա.— Գնա՛ ինձ հմա դուդուկ բի՛:

Գնըւմ ա խառատի կուշտը, ասըւմ ա.— Խառա՛տ, խառա՛տ, դուդուկ տու, դուդուկ տանիւմ չոբանին տամ, չոբանն ինձի գառը տա, գառնիկ տանիւմ աստոծ տամ, աստոծ ինձի անձրն տա, անձրն տանիւմ գեղինն տամ, գեղինն ինձի խոտիկ տա, խոտիկ տանիւմ կովիկ տամ, կովիկն ինձի կաթիկ տա, կաթը տանեմ պառվիկ տամ, պառաւլն ինձի պոչիկ տա, պոչս կցեմ, կցմցեմ, գնամ հնգորտանցս եղնա հասնիւմ:

Խառատն էլ ասըւմ ա.— Գնա ինձ հմա ձու բի՛:

Գնըւմ ա հավի կուշտն, ասըւմ ա.— Հավիկ, հավիկ ձու տուր, ձվիկ տանեմ խառատ տամ, խառատն ինձի դուդուկ տա, դուդուկ տանիւմ չոբան տամ, չոբանն ինձի գառնիկ տա, գառնիկ տանիւմ աստոծ տամ, աստոծն ինձի անձրն տա, անձրն տանիւմ գեղինն տամ, գեղինն ինձի խոտիկ տա, խոտիկ տանիւմ կովիկ տամ, կովն ինձի կաթիկ տա, կաթը տանիւմ պառվիկ տամ, պառաւլն ինձի պոչիկ տա, պոչս կցեմ, կցմցեմ, գնամ հնգորտանցս եղնա հասնիւմ:

Հավն էլ ասըւմ ա.— Գնա ինձ հմա կուտ բի՛:

Գնըւմ ա պառաւլին խնթրըւմ, ասըւմ ա.— Պառվիկ, պառվիկ, մի բուռ կուտ տուր, կուտիկ տանիւմ հավիկ տամ, հավիկն ինձի ձու տա, ձվիկ տանիւմ խառատ տամ, խառատ ինձի դուդուկ տա, դուդուկ տանիւմ չոբան տամ, չոբանն ինձի գառը տա, գառնիկ տանիւմ աստոծ

տամ, աստոծն ինձի անձրև տա, անձրև տանիմ գեղինն տամ, գեղինն ինձի խոտիկ տա, խոտը տանիմ կովիկ տամ, կովիկն ինձի կաթիկ տա, կաթը բերեմ քեզ տամ, պոչս տաս կցեմ-կցմցեմ, գնամ հնգորտանցս եղնա հասնիմ:

Պառավն ասըմ ա.— Վա՛յ տամ քու գլխին, խի՞ խալիսի կաթը խմեիր, որ հմի էլ տհե յանա-յանա ես ընգել:

Հմա եռ մեխկը գալիս ա, մի բուռը կուտ ա տալի, էն գլխին քար ընգածը տանըմ ա չմնուն էլ իրանց ուզածը փայ անըմ, կովից մի քիչ կաթն ա առնըմ, նոր էնա բերըմ ա պռավին ա տալի, իրան պոչն առնըմ ա, կցմցորըմ ա, գնըմ հնգորտանցն եղնա հասնըմ (Ի՛հա՛, քար ընգնի սրա ասողի գլխին, սհե շաշ բան կլի՞, վաղ հվատեինք էս թավուր բաներին, հմա էլ հվատող չկա):